ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ՂԱՋԱՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2017-2021թթ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ..... **Ошибка! Закладка не определена.**
   2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 4
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 5
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 5
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 6
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ..... **Ошибка! Закладка не определена.**
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 8
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .. **Ошибка! Закладка не определена.**
   3.1. Համայնքի զարգացման տեսլական 9
   3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 10
4. ՀՀԶԾ ֆինանսավորում 11
5. ՀՀԶԾ մոնիթորինգ ..... **Ошибка! Закладка не определена.**

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Ողջունելով բոլորին ներկայացնում եմ ,որ ՀՀ Արագածոտնի մարզի Ղազարավան համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը մշակվել է հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված ՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գոնծունեության բնագավառներում , ՀՀՀԶԾ –ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը :

Ելնելով այն իրողությունից , որ համայնքը փոքր է իր բնակչության թվաքանակով և ֆինանսական կարողություններով , համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում :Այդ պատճառով սույն ՀՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական , տեխնիկական և այլ) հնարավորություններո, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ : ՀՀՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) , որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2017-221թթ. ՀՀՀԶԾ-ն մշակվել է հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ –տնտեսական պայմանները:

ՀՀՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոցհամայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինը՝ ՀՀՀԶԾ-ի կառավարման կարևորագույն հանձնաժողովը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի ՀՀ ռազմավարական , մարզային և տարածաշրջանային գործողության մեջ դրված զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների , քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխընբռնում ՀՀՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում :
Ղազարավան համայնքի զարգացման տեսլականն առաջիկա 5 տարիների համար՝

- *Փողոցների լուսավորության վերանորոգում*
- *Փողոցների գազաֆիկացիայի ընդլայնում*
- *Ներհամայնքային ճանապարհների և փողոցների ասֆալտապատում*
- *Գերեզմանատների ցանկապատում*
- *Կարմիր անկյան շենքի վերանորոգում, որը ծառայում է որպես համայնքապետարան*

Ղազարավան համայնքի բնակչության մեծ մասն ապահովված է խմելու ջրով , միայն մեկ թաղամաս է , որ չունի շուրջօրյա ջրամատակարարում , սակայն չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ:

Համայնքն ունի 4 գերեզմանատուն , որոնք ցանկապատված չեն , որի պատճառով անասուններն անարգել մուտք են գործում այդ գերեզմանատների տարածքներ ՝ առաջացնելով բնակչության արդարացի դժգոհությունը:

Համայնքն ունի գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ , սակայն համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարող ստանալ:

Համայնքի ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են, սակայն կարիք ունի լուրջ վերանորոգման ու բարեկարգման;

Համաձայն տեղական ինքնակառավարման բնագավառի , ՀՀ օրենսդրության , ՀՀԶԾ-ն հանդիսանում է համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների ձևավորման ծրագրային հիմք:

ՀՀԶԾ-ում 2017-2021թթ.համար նախատեսված ոլորտային ծրագրերը,ծառայությունները և միջոցառումները հիմք կհանդիսանան համայնքի այդ տարիների բյուջեների կազմման , ընդունման և իրականացման համար: Գործնականում ՀՀԶԾ-ի իրականացումը կհանգի հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը ծառայությունները և միջոցառումները)համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների մշակմանը և կատարմանը:

Հետևաբար համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա հինգ տարիների բյուջեներում կատարվող մուտքերի (հատկապես՝ սեփական եկամուտների)փաստացի կատարման մակարդակից և դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ղազարավան գյուղը (նախկինում Նազրվան) հիմնադրվել է 1920-ական թվականներին : Գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում , Երևանից 28կմ , մարզկենտրոնից ՝8կմ հեռավորության վրա , ծովի մակերևույթից 1185մետր բարձրության վրա: Համայնքը սահմանակից է Փարպի, Բազմաղբյուր , Կարբի, ՈՒշի գյուղերին :
Ղազարավան գյուղում կան դամբարանադաշտեր , ինչպես նաև 5-րդ դարի հնագույն բերդի մնացորդներ , բերդը կոչվել է Գավուր Ղալա , այսինքն ՝ անհավատների բերդ , որի ներսի և դրսի կողմից պահպանվել են եկեղեցու մնացորդներ , որոնք պահպանվում են հնության կոմիտերի կողմից :
Գյուղի բնակիչների հիմնական մասը 1918-22թթ. Արևմտյան Հայաստանի Մուշ, Վան, Խլաթ և այլ շրջանների գաղթական հայեր են կազմել : Բնակվում են նաև եզդիներ:
Համայնքն ունի մեծ տարածությամբ բուսականությամբ հարուստ արոտավայրեր : Շրջակայքը հարուստ է բնական աղբյուրներով : Այդ աղբյուրներից են սնվում նաև Փարպի ,Բազմաղբյուր

գյուղերը, ջրի մի մասը տրվում է Արարատյան դաշտավայր ՝ քաղաք Էջմիածին :Ջրի առատությունը հնարավորություն է ստեղծում նաև ձկնաբուծության զարգացման համար:
Վարչական տարածքը կազմում է 1626.09 հա:
Համայնքի տարածքում կա ավազի համքավայր:
Համայնքի բնակչության թիվը կազմում է 606 մարդ, այդ թվում տղամարդիկ՝298 և կանայք՝308:: Բնակչության տարիքային կազմն այսպիսին է՝
-0-6 տարեկան- 38 մարդ
-7-17 տարեկան-71 մարդ
-18-62 տարեկան -425 մարդ
-63և ավելի մարդ

Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Ղազարավան համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն՝ 18671.6 հազ. դրամ
- ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում ՝ 38 %
- համայնքը չունի հիմնական արդյունաբերական ձեռնարկություններ, սակայն կան բնակիչներ, որոնք զբաղվում են ձկնարտադրությամբ ,
- ծառայությունների մատուցման բնագավառ է հանդիսանում համայնքապետարանը , դպրոցը
- համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը հանդիսանում է գյուղմթերքը և կաթնամթերքը , որոնց հիմնական սպառման շուկաներ հանդիսանում են մարզկենտրոն կամ մայրաքաղաք տեղափոխելը
- համայնքն ունի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հիանալի աշխարհագրական դիրք,բնական , ինքնահոս, սառնորակ ջուր , պատմական և մշակութային հուշարձաններից ՝ եկեղեցի, խաչքար, քարանձավներ ,
- համայնքն ունի միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 60 երեխա և դպրոցահեն նախակրթարան , որտեղ հաճախում են 15 երեխա
- առողջապահական հիմնարկներից համայնքում առկա է՝ բուժկետ, որը հանդիսանում է որպես առաջին օգնություն բնակչության շրջանում և այցելուների թիվը տարեկան 100-120 այցելու
- ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը ՝18-ն է
- համայնքում հիմնականում գործազրկության մակարդակը բարձր է աշխատանքի բացակայությունից ելնելով:

Համայնքում իրականացվող ծրագրերը

Ղազարավան համայնքի վարչական տարածքում գալիք հինգ տարիների համար նախատեսվող ծրագրերն ու միջոցառումներն են՝
- Փողոցների լուսավորության վերանորոգում
- Փողոցների գազաֆիկացիայի ընդլայնում
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների ասֆալտապատում
- Գերեզմանատների ցանկապատում
- Կարմիր անկյան շենքի վերանորոգում, որը ծառայում է որպես համայնքապետարան

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով , նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ , 2017-2021թթ. նախաատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- *Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի , գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ , շուկայականից ցածր տոկոսադրույքով , առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի դրամադրման , գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման , խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով :*
- *Համայնքապետարանի շենքի վերանորոգում և ջեռուցման համակարգի ապահովում , որը հնարավորություն կտա բարձր մակարդակի հասցնել համայնքապետարանի գործունեությունը, համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը :*
- *Գազաֆիկացիայի , գազամատակարարման համակարգի ստեղծում և շահագործում ՝ եռակողմ համագործակցության հրավիրելով և ներգրավելով նաև <<Ռուսգազարդ-Հայաստան>> ՓԲԸ-ին:*
- *Աշտարակ քաղաքից մինչև համայնք ճանապարհի կապիտալ նորոգում , բարեկարգում և ասֆալտապատում ՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներնը մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն:*
- *Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ՝ պետական պատվերների շրջանակներում :*
- *Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում , համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:*

2017-2021թթ. ընթացքում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների և/կամ միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- *Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպում և մատուցում*
- *3-րդ փողոցի խմելու ջրի շուրջօրյա ջրամատակարարման ապահովում*
- *Աշտարակ քաղաքի և մյուս բնակավայրերի միջև շուրջօրյա հասարակական տրանսպորտի հաճախակիության ապահովում և շահագործում:*

Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական Կանխատեսումները

Ղազարավան համայնքի բյուջեն ՝ 18671.6 հազ. դրամ (1336.8 հազ.դրամ վարչական և 5305.8 հազ. դրամ ֆոնդային մասերով),

Ծրագրերի իրականացման համար եկամուտները 2017-2018թթ. կազմելու են՝

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – 13365.8 ,հազ. դրամ , որից

ա)Վարչական եկամուտներ

Հողի հարկ -1590.2 հազ.դրամ

Գույքահարկ- 1025.0 հազ.դրամ

Հողի վարձավճար -473.6 հազ.դրամ

Գույքահարկ փոխադրամիջոց- 1600.5 հազ. դրամ

Համահարթեցման դոտացիա -8346.5 հազ.դրամ

Աղբահանություն -220.0 հազ.դրամ

բ)Ֆոնդային եկամուտներ '

Հողի օտարումից -2500.0 հազ. դրամ Վ/բ-ից Ֆ/բ կատարվող մասհանում -900.0 հազ դրամ

Տարեսկզբի մնացորդ -1905.2 հազ. դրամ

ԾԱԽՍԵՐ-13365.8 հազ.դրամ ,որից '

ա)Աշխատավարձ -10610.8 հազ.դրամ

Վառելիքի ձեռք բերում և էլեկտ.-170.0հազ.դրամ

Համակարգչային ծառայություն – 130.0 հազ. դրամ

Հակակարկտային ծառայություն -120.0 հազ.դրամ

Պահուստային ֆոնդ-900.0 հազ.դրամ

Տեղեկատվական ծառայություն -90.0 հազ. դրամ

Աղբահանություն-440.0հազ.դրամ

Տնտեսական ծախս-120.0հազ. դրամ

բ)Կապիտալ ծախսեր

Փողոցների լուսավորության 500.0 հազ. դրամ

Փողոցների ասֆալտապատում-4805.2 հազ. դրամ

Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

1. *Համայնքապետարանի շենքի վերանորոգում և ջեռուցման համակարգի ապահովում , որը հնարավորություն կտա բարձր մակարդակի հասցնել համայնքապետարանի գործունեությունը, համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, աշխուժացնել համայնքի հասարակական և մշակութային կյանքը::*
2. *Գազաֆիկացիայի , գազամատակարարման համակարգի ստեղծում և շահագործում ' եռակողմ համագործակցության հրավիրելով և ներգրավելով նաև <<Ռուսգազարդ-Հայաստան>> ՓԲԸ-ին: Բնակչությանը հասանելի դարձնել գազամատակարարումը:*
3. *Աշտարակ քաղաքից մինչև համայնք ճանապարհի կապիտալ նորոգում , բարեկարգում և ասֆալտապատում ' նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներնը մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն: Բարձրացնել ներհամայնքային կենտրոնական փողոցով երթևեկության անվտանգության մակարդակը դարձնելով այդ փողոցը լուսավոր գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների , զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար :*

4. *Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում՝ պետական պատվերների շրջանակներում :*
5. *Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում , համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:*

Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր.

- *Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը մարզկենտրոն Աշտարակին, մայրաքաղաքին)*
- *Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման , գեղատեսիլ բնությունը*
- *Համայնքում միջնակարգ դպրոցի, նախակրթարանի գործելը*
- *Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը*
- *Ոռոգման և խմելու ջրի առկայություն*

Համայնքի թույլ կողմեր

- *Գյուղապետարանի շենքի բացակայություն*
- *Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը*
- *Համայնքում արտաքին գիշերային լուսավորության համակարգի բացակայություն*
- *3-րդ փողոցի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի բացակայությունը*
- *Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը*
- *Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու խնդիրը*
- *Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդը*
- *Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը*
- *Համայնքի 4 գերեզմանատների չցանկապատված լինելը*

Հնարավորություններ

- *Համայնքի ամբողջական գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի համայնքի բնակչության կենցաղային պայմանների բավարարմանը*
- *Աշխատատեղերի ստեղծումը կնպաստի բնակչության կենցաղային պայմանների բարելավմանը*
- *Գյուղապետարանի շենքի կառուցումը հնարավորություն կտա ազատվել Կարմիր անկյան անհարմար և անչափ խոնավ շենքից և աշխատել ավելի ընդարձակ և հարմարավետ պայմաններով շենքում*

- *Համայնքում մանկապարտեզի շենքի կառուցումը հնարավորություն կտա երեխաներին մարզկենտրոն հասնելու փոխարեն հաճախել գյուղի մանկապարտեզ*
- *Մշակույթի տան կառուցումն ու շահագործումը մեծապես կնպաստի համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը , երիտասարդների հետ նպատակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը , երեխաներին արտադպրոցական դաստիրակության խմբակներում ներգրավմանը Սպառնալիքներ*
- *Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի մաշվածության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը*
- *Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը , մասնավորապես՝ նախակրթարանի և միջնակարգ դպրոցի հետագա լիարժեք գործունեությունը*
- *Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը*

Համայնքի զարգացման տեսլական

Ղազարավան համայնքի տեսլականը՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն , բարեկարգ ու մաքուր , բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր :

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- *համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով ,*
- *համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում , շահագործում , նորոգում և զարգացում*
- *ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում , արտաքին լուսավորության համակարգի անցկացում , ճանապարհային նշանների տեղադրում*
- *համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում , գազամատակարարում , աղբահանություն և սանիտարական մաքրում , տրանսպորտ և կապ , նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն , մշակույթ և սպորտ , սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով ,*
- *տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում՝ համայնքային կենտրոնի ստեղծման և մասնակցության ձևերի զարգացման միջոցով ,*
- *համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման , հասարակական սննդի , առևտրի և սպասարկման օբյեկտների ստեղծման , համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով: Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական ուղղությունները և զարգացման խթաններն են՝*

- *ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում , արտաքին լուսավորության համակարգի անցկացում , ճանապարհային նշանների տեղադրում*
- *համայնքում գյուղատնտեսության (հողագործության , անասնապահության , այգեգործության) զարգացում ՝ տնամերձերի, վարելահողերի խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով*
- *համայնքի նախադպրոցական կրթության և դաստիրակության պայմանների ընդլայնում (շենքային և գույքային , երեխաների թվի ու սննդի առումներով)*
- *համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում ՝ առանձնատների գազաֆիկացման , խմելու և տնտեսական ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման , աղբահանության ծառայության կազմակերպան ճանապարհով:*

Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն , բարեկարգ ու մաքուր , բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր :

1. *Բարձրացնել ներհամայնքային կենտրոնական փողոցով երթևեկության անվտանգության մակարդակը դարձնելով այդ փողոցը լուսավոր գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների , զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար :*
2. *Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի ՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար ՝ տարվա բոլոր եղանակներին :*
3. *Բնակչությանը հասանելի դարձնել գազամատակարարումը:*
4. *Կանխել անասունների անարգելք մուտքը գերեզմանատների տարածք:*
5. *Բարձրացնել համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակը, համայքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, աշխուժացնել համայնքի հասարակական և մշակութային կյանքը:*

Ղազարավան համայնքի բյուջեն ՝ 18671.6 հազ. դրամ (1336.8 հազ.դրամ վարչական և 5305.8 հազ. դրամ ֆոնդային մասերով),

Ծրագրերի իրականացման համար եկամուտները հինգ տարվա համար. կազմելու են՝

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – 13365.8 ,հազ. դրամ , որից

ա)Վարչական եկամուտներ

Հողի հարկ -1590.2 հազ.դրամ

Գույքահարկ- 1025.0 հազ.դրամ

Հողի վարձավճար -473.6 հազ.դրամ

Գույքահարկ փոխադրամիջոց- 1600.5 հազ. դրամ

Համահարթեցման դոտացիա -8346.5 հազ.դրամ

Աղբահանություն -220.0 հազ.դրամ

բ)Ֆոնդային եկամուտներ ՝
Հողի օտարումից -2500.0 հազ. դրամ Վ/բ-ից Ֆ/բ կատարվող մասհանում -900.0 հազ դրամ
Տարեսկզբի մնացորդ -1905.2 հազ. դրամ

ԾԱԽՍԵՐ-13365.8 հազ.դրամ ,որից ՝
ա)Աշխատավարձ -10610.8 հազ.դրամ
Վառելիքի ձեռք բերում և էլեկտ.-170.0հազ.դրամ
Համակարգչային ծառայություն – 130.0 հազ. դրամ
Հակակարկտային ծառայություն -120.0 հազ.դրամ

Պահուստային ֆոնդ-900.0 հազ.դրամ

Տեղեկատվական ծառայություն -90.0 հազ. դրամ

Աղբահանություն-440.0հազ.դրամ

Տնտեսական ծախս-120.0հազ. դրամ

բ)Կապիտալ ծախսեր

Փողոցների լուսավորության 500.0 հազ. դրամ

Փողոցների ասֆալտապատում-4805.2 հազ. դրամ

Փողոցների գազաֆիկացիայի ընդլայնում- 1000.0 հազ. դրամ

Գերեզմանատների ցանկապատում -1500.0հազ. դրամ

Կարմիր նակյան շենքի վերանորոգում, որը ծառայում է որպես համայնքապետարան ,10000.0հազ. դրամ գումարով , որից՝ 2500.0հազ. դրամ գումարը սեփական եկամուտների հաշվին, իսկ 7500.0 հազ. դրամը պետություն -*համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումների միջոցով:*

ՀՀՀԶԾ ֆինանսավորում

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն են՝

- *Փողոցների լուսավորության վերանորոգում*
- *Փողոցների գազաֆիկացիայի ընդլայնում*
- *Ներհամայնքային ճանապարհների և փողոցների ասֆալտապատում*
- *Գերեզմանատների ցանկապատում*
- *Կարմիր անկյան շենքի վերանորոգում, որը ծառայում է որպես համայնքապետարան*

2017թ. Նախատեսվում է իրականացնել փողոցների լուսավորության 500.0(հինգ հարյուր) հազ. դրամ գումարով՝ համայնքի սեփական եկամուտների հաշվին :Չնայած այն հանգամանքին , 2010թ.համայնքում կատարվել են կենտրոնական փողոցների լուսավորություն , սակայն այժմ անհրաժեշտ է լուսավորության համակարգը վերականգնել և ընդլայնել՝ վերացնել վտանգավորությունը, անհարմարություններն ու դժվարությունները հետիոտների և տրանսպորտային միջոցների համար: 2015թ. ընթացքում ներհամայնքային կենտրոնական փողոցի վերանորոգումից և բարեկարգումից հետո անհրաժեշտ է ներհամայնքային կենտրոնական փողոցը վերազինել արտաքին արտաքին լոսավորության համակարգով:

2017թ. Նախատեսվում է իրականացնել նաև փողոցների ասֆալտապատում 4805.2(չորս միլիոն ութ հարյուր հինգ հազար երկու հարյուր) դրամ գումարով՝ սեփական եկամուտների հաշվին:Ներհամայնքային ճանապարհների որոշ մասը 2012-2015թթ. ընթացքում վերանորոգվել է համայնքի միջոցների հաշվին:Ծրագրի նպատակն է ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնել փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին :

2018թ.նախատեսվում է համայնքի և <<Ռուսգազարտ-Հայաստան>> ՓԲԸ համագործակցության շրջանակներում համայնքում անցկացնել կիսատ մնացած գազաֆիկացիայի աշխատանքներ 1000.0 (մեկ միլիոն) դրամ գումարով սեփական եկամուտների հաշվին; Չնայած որ 2016թ. ընդլայնվել է 6-րդ փողոցի գազաֆիկացումը, սակայն կան փողոցներ որոնց գազաֆիկացիան կիսատ է մնացել :

2019թ.նախատեսվում է իրականացնել համայնքի 4 գերեզմանատների տարածքի ցանկապատում 1500.0(մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարով սեփական նեկամուտների հաշվին: Քանի որ ցանկապատի բացակայության պատճառով անասունները անընդհատ ներթափանցում են գերեզմանատան տարածք, ուստի անհրաժեշտ է ցանկապատել :

2020-2021թթ. նախատեսվում է Կարմիր նակյան շենքի վերանորոգում, որը ծառայում է որպես համայնքապետարան ,10000.0հազ. դրամ գումարով , որից՝ 2500.0հազ. դրամ գումարը սեփական եկամուտների հաշվին, իսկ 7500.0 հազ. դրամը պետություն *-համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումների միջոցով:Քանի որ համայնքապետարանը չունենալով շենք ժամանակավորապես տեղակայված է համայնքի Կարմիր անկյան շենքում, որի պայմանները չեն համապատասխանում նշված հիմնարկի գործունեության բնույթին և պահանջներին : Ծրագրի նպատակն է բարձրացնել համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակը , համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը , աշխուժացնել համայնքի հասարակական մշակութային կյանքը:*